Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

- պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
- ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

- **Share** — copy and redistribute the material in any medium or format
- **Adapt** — remix, transform, and build upon the material

9268

ւթյուն Հ. Կ. (բ) Կ. Լենինականի

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

# ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՄԲՋԻՋԻ

Համ. Կ. (բ) Կ. Կենտկոմի 1930 թ. ոգոստոսի 26-ի վորոշումը)

3кп5
Հ-22

1932 թ. ԼԵՆԻՆԱԿԱՆ

17.09.2013
25 SEP 2006
1 DEC 2009

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՄԲՋԻՋԻ ՄԱՍԻՆ

(ՀԱՄԿԿ (բ) Կենտկոմի 1930 թ. օգոստոսի 26-ի վորոշումը)

*1. Կուսակցության հիմնական կազմակերպությունը հանդիսանում է կուսբջիջը, վորը հաստատվում է կուսակցական կոմիտեյի կողմից բաղկացած առնվազն կուսակցության յերեք իսկական անդամներից (ՀԱՄԿԿ (բ) կանոնադրությունը)։*

*2. Համատարած կոլեկտիվացման շրջաններում, վորպես կանոն, կուսբջիջները կազմակերպվում են կոլտնտեսություններում։ Բջիջները ստեղծում են կուսխմբեր և նշանակում կուսկազմակերպիչներ արտադրական մասերի, բրիգադների համար և այլն։ ՀամԿ Կ (բ)բջիջները կոլխոզներում վորպես կուսօրգաններ ակտիվ մասնակցություն են ցույց տալիս գյուղի քաղաքական և տնտեսական կյանքում։ Համատարած կոլեկտիվացման շրջանների առանձին գյուղերում վորտեղ գյուղացիական տնտեսությունների կեսից պակաս է կոլեկտիվացված, մնում են գյուղական բջիջները։*

9268

Վոչ համատարած կոլլեկտիվացման շրջաններում, վորպես կանոն, մինչև տնտեսությունների մեծամասնության ընդգրկումը կոլլեկտիվացման մեջ, մնում են գյուղական բջիջները, վորոնք նույնպես կազմակերպում են կուսխմբեր և նշանակում կուսկազմակերպիչներ ըստ տերիտորիալ հատկանիշի (թաղամաս, գյուղակ, և այլն)։ Բացառություն թույլ է տրվում այն գյուղերի վերաբերմամբ, վորոնց տնտեսությունների կեսը կոլլեկտիվացած է, վորտեղ կուսակցական բջիջները կազմակերպվում են կոլտնտեսություններում։

Ծանոթություն.—Վոչ համատարած կոլլեկտիվացման շրջաններում, խոշոր գյուղերում (ստանիցաներում) թույլ է տրվում կազմակերպել կոլխոզային բջիջներ. թեկուզ և կոլլեկտիվացման տոկոսը հասած չլինի 50-ի։

3. Շրջանային կուսակցական կազմակերպությունների վորոշումով և մարզային (յերկրային) կոմիտեյի կամ ազգ. կոմկուսի Կենտկոմի կողմից հաստատվելով՝ կարող են կազմակերպվել կոլտնտեսական միացյալ բջիջներ.

ա) Յեթե գյուղի (ստանիցայի) տերիտորիայի վրա կան մի քանի ինքնուրույն կոլտնտեսություններ.

բ) Ամենախոշոր կոլտնտեսություններում վորտեղ կա առնվազն 50 կոմունիստ.



գ) Յերբ գյուղի տերիտորիայի վրա կան մի քանի ինքնուրույն խորհրդային, կոոպերատիվ և յերկաթուղային բջիջներ։

Այդ բոլոր դեպքերում կոլտնտեսական միացյալ բջջի մեջ մտնող բջիջները պահպանվում են ցեխային բջիջների իրավունքներով։

4. Մեքենատրակտորային կայաններում աշխատող կոմունիստները կազմում են առանձին բջիջ, վորը.—

ա) Մտնում և ընդհանուր կոլտնտեսական բջիջ է կազմում ցեխային բջջի իրավունքներով յեթե ՄՏԿ-ն սպասարկում է միայն մի կոլտնտեսություն.

բ) Հանդիսանում է առանձին կանոնադրական բջիջ և գտնվում է շրջկոմի անմիջական ղեկավարության տակ, յեթե ՄՏԿ-ն սպասարկում է ինքնուրույն բջիջներ ունեցող կոլտնտեսություններ։

## ԲՋԻՋԻ ՂԵԿԱՎԱՐ ՈՐԳԱՆՆԵՐԸ

5. Բջջի բարձրագույն ղեկավար որգանը հանդիսանում է նրա անդամների ընդհանուր ժողովը։ Ընդհանուր ժողովը հրավիրվում է բյուրոյի կողմից, կամ տվյալ բջջի կուսանդամների մեկ յերրորդի պահանջով։ Բջջի ժողովը գու-

մարվում է ամիսը յերկու անգամ կանոնավոր կերպով և համարվում է կայացած, յերբ ներկա յե ավելի բջիջի կեսից վոչ պակասը։

Յուրաքանչյուր ժողովը վարելու համար ընտրվում է նախագահություն, կամ նախագահ և քարտուղար, վորը պահում է ժողովի արձանագրությունը։ Բոլոր հարցերը լուծվում են տրվյալ բջիջի կուսանդամների ձայների պարզ մեծամասնությամբ։ Բջիջի ընդհանուր ժողովը քննում է ընդհանուր քաղաքական, տնտեսական, պրոֆեսիոնալ, ընդհանուր կուսակցական հարցեր և տեղական կյանքին վերաբերվող հարցեր, հաստատում է բջիջի աշխատանքի պլանը, լսում և քննում է բջիջի բյուրոյի հաշվետվությունները իր կատարած աշխատանքի մասին քննում է կուսակցության անդամ կոմթեկնածու լինելու համար տրված դիմումները, քննում է կուսակցությունից հեռացնելու, բջիջների անդամների վրա տույժեր դնելու հարցերը, ընտրում է պատվիրակներ շրջանային կուսկոնֆերանսների համար, լսում և քննում է ԼԿՅԵՄ բջիջների, իր կոլխոզի և ձեռնարկության, գյուղի հիմնարկի անկուսակցական կազմակերպությունների ֆրակցիաների, ինչպես և բջիջի առանձին անդամների հաշվետվությունները իրենց աշխատանքի մասին։



6. Բջիջի ընդհանուր ժողովն ընտրում է բյուրո կուսակցության անդամներից՝ 6 ամիս ժամկետով, բաղկացած վոչ ավել 7 անդամից և 2 թեկնածուից, ավելացնել թույլատրվում է մի այն շրջանային կուսկոմիտեյի համաձայնությամբ (7 անդամից պակաս ունեցող բջիջը բյուրոյի փոխարեն ընտրում է մի քարտուղար)։ Բյուրոն ժողովների արանքում յեղած ժամանակամիջոցում ղեկավարում է բջիջի ամբողջ աշխատանքը։

7. Բջիջի բյուրոն պարտականությունները բաշխում է իր անդամների միջև և իր կազմից ընտրում է մի քարտուղար, այդ մասին տեղեկացնելով առաջիկա ընդհանուր ժողովին։ Բյուրոն իր կողմից նշանակում է ներկայացուցիչներ ԼԿՅԵՄ բջիջում աշխատելու համար (կուսամրացված), կազմակերպիչներ աշխատանքի առանձին ճյուղերի համար—բատրակների, չքավորների, կանանց և այլն, բաշխում է կուսաշխատանքը բջիջի բոլոր անդամների միջև, հետևում է նրա կատարմանը (այն բջիջներում, վորոնք բյուրո չունեն, կուսպարտականությունները բաշխում է բջիջի ժողովը), բյուրոն կենսագործում է կուսկանոնադրությունը, վերադաս կուսօրգանների վորոշումները և բջիջի ընդհանուր ժողովների վորոշումները, հետևելով, վոր բջիջի անդամները կատարեն կանոնադրությունը և վորոշումները

քննում է կուսկարգապահության և կուսօրգանների դիրեկտիվների խախտման բոլոր դեպքերը։

8. Բջիջի բյուրոն՝ համապատասխան կուսակցության հերթական խնդիրներին և տեղականկազմակերպությունների վորոշումներին, մշակում է բջիջի աշխատանքների կոնկրետ պլանը, հաշվի առնելով իր կոլտնտեսության, գյուղի, հիմնարկի առանձնահատկությունները, ներկայացնում է այդ պլանը ընդհանուր ժողովին ի հաստատություն. կազմում է օրակարգ, նշում է զեկուցումներ և պատրաստում է նյութեր ու անհրաժեշտ առաջարկություններ բջիջը ընդհանուր ժողովի համար, գումարում է բջիջի ակտիվը նախնական պատրաստություն պահանջող հարցերի շուրջը, մասնակցում է կոլտնտեսության և գյուղի հերթական ընդհանուր ժողովների օրակարգի հարցերի պատրաստությունը, պատրաստում է բջիջների անդամների առաջքաշումը կուս, արհ. խորհ. և այլ հասարակական աշխատանքի։

Իր աշխատանքի մասին բյուրոն հաշվետվություն է տալիս վոչ պակաս քան 2—3 ամիսը մի անգամ բջիջի ընդհանուր ժողովի առաջ, ինչպես և ներկայացնում է վերջինիս ի հաստատություն իր վորոշումներից ամենակարևորները։

9. Քարտուղարը պետք է ունենա առնվազն



մի տարվա կուսստաժ։ Բացառություն թույլ է տրվում միայն շրջկոմի համաձայնությամբ։

Քարտուղարը ղեկավարում է բյուրոյի ամենօրյա աշխատանքը, պատրաստում է օրակարգը հրավիրելով բյուրոյի նիստ և իրագործում է բջիջի կապը կուսակցական կոմիտեի հետ։ Իր աշխատանքի մասին քարտուղարը հաշիվ է տալիս բջիջի բյուրոյին։։

10. Բջիջն իր աշխատանքը տանում է շրջկոմի ղեկավարությամբ, կանոնավոր հաշիվ տալիս նրան։ Շրջկոմի վորոշումները պարտադիր են բջիջի համար։ Բջիջը իրավունք ունի բողոքարկելու շրջկոմի վորոշումները վերադաս կուսկոմին։ Միաժամանակ հաղորդելով այդ մասին շրջկոմին և չդադարեցնելով բողոքարկված վորոշումների կատարումը։

## ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՋԻՋԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

11. Ելնելով կուսակցության գլխավոր գծից, վորն ուղղված է դեպի յերկրի ինդուստրացումը և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը, բջիջն առաջարկում է հետեվյալ հիմնական խնդիրները։

ա) Կոլտնտեսականների համախմբումը, վորպես կուսակցության և Խորհրդային իշխանության հիմնական հենարանը գյուղում և առանձ-

նապես կոլտնտեսության բատրակ չքավոր մասի
ինչպես և անհատ տնտեսությունների-չքավորնե
րի և միջակների լայն մասսաների համախմբու-
մը գյուղատնտեսության սոցիալիստական վերա-
կառուցման հիմնական խնդիրների շուրջը, ամ-
րապնդել բանվոր դասակարգի, կոլտնտեսական-
ների և գյուղի չքավորության դաշինքը միջակ
գյուղացիության հետ ընդեմ կուլակության և
գործնականում ապահովել կուլակության, որպես
դասակարգի վերացնելու քաղաքականության ի-
րագործումը չքավոր ու միջակ տնտեսություն-
ների համատարած կոլլեկտիվացման հիման վրա,
ամեն կերպ ամրապնդել պրոլետարական դիկտա-
տուրայի օրգանները—խորհուրդները, առավելա-
գույն չափով բարձրացնել նրանց ղեկավար դե-
րը գյուղի տնտեսական և կուլտուր-հասարակա-
կան կյանքի սոցիալիստական վերակառուցման
մեջ։

բ) Ամեն կերպ ամրացնել և էլ ավելի զար-
գացնել կոլտնտեսությունները, լավագույն ձևով
կազմակերպելով արտադրությունը, կիրառելով
ավելի կատարելագործված գյուղատնտեսական
տեխնիկա, ճիշտ կազմակերպելով աշխատանքը
և ամրապնդելով ագրիկուլտուրային ձեռնարկում-
ներ, յեկամուտների ճիշտ բաշխման, կազմակեր-
պում կոլխոզում՝ աշխատանքի բարձր արտադրո-



ղականությունը քաջալերելու հիման վրա,—ավե
լացնելով հանրայնացված ֆոնդերը և բարձրա-
ցնելով կոլտնտեսականների կուլտուր-կենցաղա-
յին և նյութական մակարդակը—տնտեսության
ապրանքայնության բարձրացումը և կոլտնտե-
սության պարտավորությունների ժամանակին կա-
տարումը պետության հանդեպ, հետամնաց, մանր
սեփականատիրական մնացորդների հաղթահարու-
մը կոլտնտեսության մեջ, արտադրական օգնու-
թյուն անհատ տնտեսատեր չքավորների և մի-
ջակների տնտեսության բարձրացման համար և
վերջիններիս սիստեմատիկ ներգրավումը կոլտն-
տեսության մեջ կամավոր հիման վրա, գործնա-
կան փորձով ցույց տալով խոշոր հանրայնացված
տնտեսության բոլոր առավելությունները։

Համախմբել կոմունիստական կուսակցության
գլխավոր գծի իրագործման, նրանից յեղած թե-
քումների դեմ ակտիվ պայքարի շուրջը, ծավա-
լելով պրոլետարական լայն ինքնաքննադատութ. և
ներկուսակցական դեմոկրատիա, ու այդ հիման վրա
բջիջի աշխատանքի մեջ ներգրավել յուրաքան
չյուր կոմունիստի, բարձրացնել լենինյան բոլ-
շևիկյան կուսդիսցիպլինան բջիջի անդամների
մեջ, նոր անդամների ներգրավումը կուսակցու-
թյան մեջ բանվորներից, բատրակներից, առա-
ջավոր և ամենակայուն կոլտնտեսականներից,

կադրերի պատրաստությունը և առաջ քաշումը կուսակցական, տնտեսական ու հասարակական աշխատանքի։

## ԲՋԻՋԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

12. Կուսակցական բջիջը ակտիվ կերպով մասնակցում է կոլտնտեսության տնտեսական կյանքին, ապահովում է կոլտնտեսականների ակտիվ մասնակցությունը տնտեսական բոլոր հարցերի քննության, առավելագույն չափով օգտագործելով նրանց տնտեսական փորձը։ Բջիջը լսում է ֆրակցիաների հաշվետվությունները՝ տալիս է ցուցմունքներ հետագա աշխատանքի համար, խիստ հետևում է կուսակցական ճիշտ գծի կիրառմանը աշխատանքի պրակտիկայում, չթույլատրելով մանր բաների համար միջամտել ֆրակցիայի աշխատանքին։

13. Բջիջը իր աշխատանքում իրագործում է —յուրաքանչյուր կոմունիստի ակտիվ մասնակցությունը կոլտնտեսության տնտեսական հիմնական խնդիրների կիրառման մեջ, ընդունված կանոնադրության խիստ պահպանումը, կոլտնտեսության կազմակերպչական—տնտեսական պլանը ժամանակին կազմելը և կատարելը, աշխատանքի ճիշտ կազմակերպումը արտադրության մեջ, արտադրության միջոցների ել ավելի լավ օգ-



տագործումը, հողատար վերաբերմունքը դեպի գյուղատնտեսական ինվենտարը, աշխատանքի արտադրողականության և աշխատանքային դիսցիպլինայի բարձրացումը, պոկողական տրամադրությունների, թափթփվածության և դանդաղկոտության տարրերի հաղթահարումը, հերթական տնտեսական կամպանիաների (ցանք, բերքահավաք, վար և այլն) ճիշտ կազմակերպումը, արտադրանքի ինքնարժեքի իջեցումը և տնտեսության ապրանքայնության բարձրացումը, միջոցների կուտակումը կոլտնտեսության տեխնիկական բազայի ընդարձակման համար, պայմանագրերի և պարտավորությունների ժամանակին կատարումը կոոպերատիվ և պետական կազմակերպությունների հանդեպ, նյութական հաշվառքի և հաշվետվության ճիշտ դրվածքը, ազատ բանվորական ուժի ճիշտ օգտագործումը կոլտնտեսությունից դուրս (շինարարություններ, արհեստներ և այլն), արտադրական օգնության կազմակերպումը չքավոր և միջակ անհատ տնտեսություններին, բջիջի բոլոր անդամների, կոմերիտականների և անկուսակցական ակտիվի մասնակցությունը ագրոմինիմումի և այլ ագրոձեռնարկումների պրոպագանդին և տարածմանը անհատական տնտեսությունների վրա։

14. Բջիջը աշխատանք է տանում դասակա-

րակելու և պատրաստելու տնտեսական կադրեր ակտիվ կոլտնտեսականների կազմից, ապահովելով բատրակ չքավորական տարրերի առաջ քաշումը։

ա) Բջիջը հայտաբերում է ամենից ակտիվ և ընդունակ կոլտնտեսականների, թե կուսակցական և թե անկուսակցական, իրագործելով նրանց առաջ քաշումը կոլտնտեսական հասարակության միջոցով՝ դնելով ղեկավար աշխատանքի կոլտնտեսության մեջ, ցույց է տալիս նրանց մշտական օգնություն աշխատանքի մեջ և կազմակերպում է նրանց սիստեմատիկ պատրաստությունը և վերապատրաստությունը կուրսերի, խմբակների, խորհրդակցությունների միջոցով, ինչպես և ուղարկելով գյուղատնտեսական և այլ տեխնիկումներ, բուհեր և այլն։

բ) Օժանդակում է մասնագետների ճիշտ օգտագործմանը և ստեղծում է նրանց համար անհրաժեշտ պայմաններ և աջակցություն, կազմակերպելով սիստեմատիկ օգնություն և հասարակական վերահսկողություն իրենց աշխատանքի վերաբերմամբ։

15. Բջիջն ապահովում է կոլտնտեսական մասսաների ակտիվության լայն ծավալումը, կազմակերպում է սոցիալիստական մրցում, հարվածայնություն, ներգրավում է կոլտնտեսականնե-



րին արտադրական խորհրդակցությունների աշխատանքում։

Բջիջն ապահովում է կոլտնտեսականների ակտիվ մասնակցությունը ընդհանուր կոլտնտեսական բոլոր հարցերի (տնտեսական, կուլտուրական, կենցաղային և այլն) քննությանը և լուծմանը, կազմակերպում է վարչության սիստեմատիկ հաշվետվությունը կոլտնտեսականների առաջ, իրագործում է միջակ կոլտնտեսականների ակտիվ մասնակցությունը կոլտնտեսության կյանքին։

## ԱՇԽԱՏԱՆՔԸ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՄԵՋ

16. Բջիջի կարևորագույն և հիմնական խնդիրն է մշտական կապը, անկուսակցական մասսայի կազմակերպումը և կուսակցության ազդեցության տարածումը այդ մասսայի վրա։ Անհատ տնտեսատերերի չքավոր-միջակ մասսայի վրա այդ ազդեցության հիմնական տարածողները հանդիսանում են կոլտնտեսականները, որպես կուսակցության և Խորհրդային իշխանության հիմնական հենարանը գյուղում և անկուսակցական բանվորական, բատրակային, չքավորական, միջակային ակտիվը, որը համախմբված է կուսակցության, խորհուրդների, արհմիությունների, կոոպերացիայի և այլ կազմակերպությունների շուրջը։

17. ԲՋԻՋը մասսաների մեջ տարած իր ամբողջ աշխատանքը կառուցում է ընդհանուր կուսակցական վորոշումների հիման վրա, հաշվի առնելով անկուսակցական մասսաների տրամադրությունները և պահանջները։ Միաժամանակ բացատրական և դաստիարակչական աշխատանքի միջոցով հաղթահարելով մանր բուրժուական տրամադրությունները և տեղական նեղ բնույթ կրող պահանջները, դաստիարակելով մասսաների մեջ սոցշինարարության ընդհանուր շահերի գիտակցությունը, ԲՋԻՋը կազմակերպում է անկուսակցական լայն մասսաների աջակցությունը կուսակցության լոզունգներին և վորոշումներին, սրանց կիրառումը նրանց կողմից։

18. ԲՋԻՋի կարեվորագույն խնդիրներից մեկն է ստեղծել և դաստիարակել կոլտնտեսական ակտիվի լայն կադրեր, ինչպես և ստեղծել ակտիվ բատրակ, չքավոր և միջակ անհատ տնտեսություններից։

Կոլտնտեսություններում անհրաժեշտ է կազմակերպել ակտիվ, առաջին հերթին արտադրական խորհրդակցությունների շուրջը, ընդհանուր կոլտնտեսական և առանձին մասերի և այլն։ Ակտիվ կոլտնտեսականներից պատրաստելով գործնական ագիտատորներ, կոլտնտեսական շար-



ժման գաղափարը տարածողներ, ուղարկելով նրանց ուրիշ գյուղեր և կոլտնտեսությունները լայնորեն ժողովրդականացնելու իրենց կոլտնտեսության կոնկրետ հաջողությունները և տնտեսական նվաճումները։

19. Անկուսակցական ակտիվը կուսակցության շուրջը համախմբելու նպատակով, ԲՋԻՋը սարքում է պարբերական դռնբաց ժողովներ, նրանց մասնակից անելով կոլտնտեսականներին և անհատ տնտեսատեր բատրակներին, չքավորներին, միջակներին, նրանցից ակտիվներին ներգրավում է քաղգրագիտության դպրոցում, աջակցում է առաջ քաշելու խմբակներում և կուսակցությանը ամենամոտիկ կանգնածներին պատասխանատու աշխատանքի՝ թե կոլտնտեսության մեջ և թե նրանցից դուրս։ ԲՋԻՋը իր միջից ընտրում է բավականաչափ պատրաստված ընկերների անհատական կապ պահպանելու անկուսակցականների հետ։ Անկուսակցական ոգաններ կազմելիս, վորոնք գտնվում են ԲՋԻՋի ազդեցության սահմաններում, կոլտնտեսությունների վարչության, խորհուրդների, կոոպերատիվի, պրոֆ որգանների և այլ ընտրությունների ժամանակ, ԲՋԻՋը իր թեկնածուներին առաջ քաշելով

1007
30170
ՀՍՍՀ – ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

միասին, առաջ է քաշում նաև մասսաների մեջ հեղինակություն վայելող, կուսակցության մոտիկ կանգնած անկուսակցականներին։ Անկուսակցականներից լավագույններին բջիջը ձգտում է ներգրավել կուսակցության մեջ։

20. Բջիջը մասսայական աշխատանք է տանում անհատական տնտեսություն ունեցող չքավոր—միջակ մասսաների մեջ, ցույց է տալիս նրանց կազմակերպչական—տնտեսական օգնություն, ապահովում է նրանց մասնակցությունը խորհուրդների կազմում, կոոպերացիայի և հասարակական այլ կազմակերպությունների օրգաններում, մասնակից է դարձնում նրանց կոլտնտեսության հասարակական կյանքին—արտադրական խորհրդակցությունների, և կոլեկտիվացած խոշոր տնտեսության առավելությունները ցույց տալու հիման վրա ներգրավում է նրանց կոլտնտեսության կազմի մեջ։ Միաժամակ, բջիջը ղեկավարում և ակտիվ կերպով մասնակցում է բոլոր հերթական կամպանիաներին—կոնտրակտացիա, ցանք, հարկ, հացամթերումներ և այլն։

21. Բջիջը տանում է քաղաքական—դաստիարակչական և կուլտուրական աշխատանք կոլտնտեսականների և անհատ տնտեսատերերի մեջ օգնելով



նրանց վերացնելու մանր սեփականատիրական հոգեբանությունը և ազգային խտրությունը և վերադաստիարակում է նրանց կոլեկտիվիզմի ու ինտերնացիոնալիզմի ոգով։

Բջիջն աշխատանք է տանում վերացնելու անգրագիտությունը և ապահովում է Խորհրդային իշխանության դիրեկտիվի իրագործումը յերեխաների պարտադիր ուսման վերաբերյալ, նպաստում է ագրիկուլտուրային գիտելիքների տարածմանը ազգաբնակության մեջ և մղում է հակակրոնական պրոպագանդա։ Այս ամբողջ աշխատանքը բջիջն իրագործում է խրճիթ—ընթերցարանների, պատի թերթերի, դպրոցական խորհուրդների, գյուղխորհրդի սեկցիայի միջոցով, այդ աշխատանքին մասնակից դարձնելով գյուղի կուլտուրական ուժերին, առաջին հերթին ուսուցիչներին, գյուղատնտեսներին և այլն, ամենկերպ զարգացնելով և կազմակերպելով կոլտնտեսականների նախաձեռնությունը և ակտիվությունը իր կուլտուրական շինարարության գործում։ Բջիջը բոլոր միջոցներով նպաստում է մասսաների մեջ տարածելու թերթերի և ժուռնալների բաժանորդագրությունը և լայնացնելու բանգյուղթղթակիցների ցանցը և դաստիարակչ

կան աշխատանք է տանում վերջիններիս շարքերում։

22. ԲՋԻՋը մասսայական աշխատանք է տանում կանանց մեջ, թե կոլխոզում և թե նրանից դուրս, ձգտելով գեղգջկուհիների հիմնական մասսայի ակտիվը մասնակից դարձնելու գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործին։ Այս նպատակով ԲՋԻՋը կանանց մեջ աշխատանք տանելու համար ներգրվում է թե կոմունիստ և թե անկուսակցական ակտիվիստներ, ապահովում է գյուղի կանանց պատգամավորական ժողովների աշխատանքը, անց է կացնում կանաց շարքերում սոցմրցումը և հարվածայնությունը, ստեղծում է զանազան խմբակներ, ներգրավում է կանանց կոլտնտեսության, խորհուրդի և հասարակական այլ կազմակերպությունների աշխատանքների մեջ։

ԲՋԻՋը նախաձեռնող է հանդիսանում կազմակերպելու մանկական մսուրներ, մանկապարտեզներ, հասարակական սնունդ, հետևում է կանանց աշխատանքի պաշտպանության պայմանների կատարմանը և աշխատանք է տանում վերացնելու անգրագիտությունը կանանց շարքերում։

23. Յերիտասարդության մեջ վողջ աշխա-



տանքը ԲՋԻՋը տանում է կոմյերիտմիության կազմակերպության միջոցով։ Կոմյերիտմիության ղեկավարության գործում ԲՋԻՋը հատուկ ուշադրություն է դարձնում կոմյերիտական բջիջի հասարակական քաղաքական աշխատանքի բովանդակությանը, նրա մարքսիստական—լենինյան դաստիարակությանը, միության աճման կարգավորման հարցերին, աղջիկների ներգրավմանը կոմյերիտմիության մեջ և կուսակցական կորիզի աճեցմանը։ ԲՋԻՋը պետք է աշխատի, վոր կոմյերիտականները դառնան առաջամարտիկներ կոլտնտեսության ամրապնդման համար կարևորագույն ձեռնարկումների մեջ, հանդիսանան որինակելի կարգապահներ արտադրության մեջ,— վորպեսզի յերիտասարդությունը առավելագույն չափով ներգրավվի ակտիվ կերպով մասնակցելու կոլտնտեսական շինարարությանը և բոլոր խնդիրների ներգրավմանը գյուղում։

24. ԲՋԻՋը, թե իր անդամներ և թեկնածու-կուսակցականներին՝ ներգրավում է խորհրդային շինարարության մեջ խորհուրդների սեկցիաների միջոցով, կոոպերացիայի և հասարակական այլ կազմակերպությունների աշխատանքներում։ Աշխատանք է տանում պետական, կոոպերատիվային

և առեվտրական ապարատի բարելավման համար, բյուրոկրատիզմի և գեղծարարությունների դեմ պայքարելու գործում։

25. Բջիջը գյուղական արհկազմակերպությունների հետ միասին ապահովում է կապի ուժեղացումը կոլտնտեսությունների և գործարանների, առաջին հերթին շեֆ ձեռնարկությունների բանվորական մասսաների միջև, ամեն կերպ ոժանդակելով շեֆական աշխատանքին գյուղատնտեսության հետ կապված բանվորների ոգտագործումը, կոլտնտեսականներին ձեռնարկություններն ուղարկելը և այլն։

26. Կոլտնտեսական բջիջները հանդիսանում են հիմնական կուսակցական կազմակերպություններ, վորոնք գործնականում քաղաքական մասսայական աշխատանք են տանում չքավորության մեջ, թե կոլտնտեսություններում և թե չքավոր անհատ տնտեսատերերի մեջ։

*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Չքավորների հետ տարվելիք աշխատանքի ձևերը վորոշվում են Կենտկոմի հատուկ վորոշումով։*

## ՆԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

27. Բջիջը կատարում է սիստեմատիկ ներգրավում կուսակցության մեջ նոր անդամների՝ բանվորներից և առաջավոր կոլտնտեսականներից,



վորոնք ցույց են տվել նախաձեռնություն կոլտնտեսությունների կազմակերպման և ամրացման մեջ, ակտիվություն և անսասանություն կուլակության դեմ մղված պայքարում, պայքար են մղում մանր բուրժուական տրամադրությունների դեմ և ստուգված են գյուղերում հերթական տնտեսական կամպանիաներ անցկացնելու ընթացքում։

Բջիջը հետեվում է, վոր թեկնածուները ժամանակին փոխադրվեն կուսակցության իսկական անդամների և կենտրոնացնում է ուշադրությունը նրանց կուսակցական—քաղաքական դաստիարակության վրա։

28. Բջիջը ակտիվ կերպով մասնակցում է թե տեղական և թե ընդհանուր կուսակցական համագումարների, կոնֆերանսների, խորհրդակցությունների որակարգի բոլոր հարցերի քննությանը, ինչպես և այն հարցերի, վոր առաջադրում է կուսակցությունը քննության համար, իր նախաձեռնությամբ առաջադրում է հարցեր կուսկազմակերպության քննությանը։

Բջիջը ուսումնասիրում և կենսագործում է կուսհամագումարների, կոնֆերանսների վորոշումները և բարձրագույն կուսորգանների դիր-

ռեկտիվները, ինչպես և աջակցում է Խորհրդային իշխանության դիրեկտիվների իրագործմանը։

29. Բջիջը իր աշխատանքը կառուցում է պրոլետարական ինքնաքննադատության և ներկուսակցական դեմոկրատիայի լայն ծավալման հիման վրա, ներգրավում է կուսակցության բոլոր անդամների կուսակցական ակտիվ աշխատանքում և ապահովում է նախաձեռնության և ինքնագործունեության առավելագույն դրսևորումը կուսակցության յուրաքանչյուր անդամի կողմից։

Իր ուժերի բաշխման մեջ բջիջն աշխատում է առավելագույն չափով տարածել կուսակցության ազդեցությունը անկուսակցական կոլտնտեսականների վրա, թե արտադրության մեջ (մասեր, բրիգադներ), և թե կոլտնտեսության հասարակական--քաղաքական ամբողջ կյանքում, ինչպես և գյուղի հասարակական կազմակերպությունների աշխատանքում (խորհուրդ, կոոպերացիա և այլն)։

Բջիջը կազմակերպում է վերահսկողություն կուսակցական պարտականությունների կատարման վրա կոմունիստների կողմից (արտադրության մեջ կոմունիստների որինակելի լինելը, կուսակցական ժողովներին հաճախելը, անդամավճարների մուծումների վճարելը, կուսակցական



վորոշումների ակտիվ կիրառումը անկուսակցականների մեջ և այլն), լսելով առանձին կոմունիստների հաշվետվությունները իրենց կուսակցական պարտականությունների կատարման մասին։

30. Բջիջը պահանջում է կուսակցության անդամներից և թեկնածուներից որինակելի և կարգապահ կերպով կատարել արտադրական պարտականությունները, ակտիվ մասնակցել սոցմրցման հարվածայնության, արտադրական խորհրդակցությունների աշխատանքին, հայտնաբերել նախաձեռնություն կոլտնտեսության տնտեսական կյանքի թերությունների վերացման գործում։ Բջիջն աշխատում է, վոր կոմունիստները որինակ հանդիսանան անկուսակցական կոլտնտեսականների համար, կոմունիստների կողմից արտադրական պարտականությունների խախտումը համարելով անկուսակցական դիսցիպլինայի խախտում։

Կուսակցության անդամների և թեկնածուների մարքս—լենինյան դաստիարակության և նրանց կուլտուր-քաղաքական մակարդակը բարձրացնելու նպատակով, բջիջը կազմակերպում է քաղգրագիտական դպրոցներ, մարքսիստական խմբակներ, ինչպես և գյուղատնտեսության վերակառուցման կազմակերպչական—տեխնիկա-

կան և ագրոնոմիական հարցերի ուսումնասիրությունը։

## ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

31. Անկուսակցական կազմակերպությունների աշխատանքի վրա կուսակցական ազդեցությունը բջիջն իրագործում է կոլտնտեսության, գյուղխորհրդին, կոոպերատիվին, փոկերին, կամավոր ընկերություններին և այլ ընտրովի մարմիններին կից կազմակերպելով ֆրակցիաներ կամ այդ օրգաններում աշխատել առանձին կոմունիստների միջոցով։ Ֆրակցիաներն աշխատում են բջիջի ղեկավարությամբ և վերջինիս որոշումները պարտադիր են նրանց համար։ Բջիջն ամեն կերպ աշխատում է աշխուժացնել և ճիշտ կազմակերպել ֆրակցիաների աշխատանքը։ Բջիջը պարբերաբար լսում է ֆրակցիաների կամ անկուսակցական կազմակերպություններում աշխատող կոմունիստների հաշվետու զեկուցումները, ինչպես և քննում է ֆրակցիաների աշխատանքի կարևորագույն հարցերը, որոշումներ է կայացնում նրանց մասին առանց միջամտելու կոլտնտեսությունների վարչությունների և ֆրակցիաների ամենօրյա օպերատիվ աշխատանքին։



32. Բջիջը, իրագործելով անկուսակցական կազմակերպությունների ղեկավարությունը, աշխատում է ամեն կերպ բարձրացնել նրանց դերը, առանձնապես գյուղխորհուրդների դերը կոլտնտեսական—քաղաքական կամպանիաների անցկացման մեջ։

## ԿՈՒՍԽՄԲԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

33. Կուսխումբը բջիջի և կուսկազմակերպչի ղեկավարության ներքո ղեկավարում է իր խմբի բոլոր կոմունիստներին, բաժանում է նրանց միջև կուսակցական աշխատանքը, կազմակերպում է հարվածայնություն, սոցմրցում, ներգրավում է կոլտնտեսականներին և կոլտնտեսուհիներին արտադրական խորհրդակցությունների աշխատանքի մեջ, կազմակերպում է իր խմբի կոմունիստներին, կոմյերիտականներին և անկուսակցականներին իրագործելու բջիջի առաջ կանգնած բոլոր խնդիրները, առաջին հերթին արտադրական խնդիրները, աշխատանք է տանում ներգրավելու կուսակցության նոր անդամների, անկուսակցականներին մասնակից է դարձնում կոլտնտեսության ընդհանուր ժողովներին և կուսակցական բաց ժողովներին, ուշի ուշով ուսումնասիրում է կոլտնտեսությունների տրամադրու-

թյունները և բացատրում է նրանց կուսակցության քաղաքացական հիմնական խնդիրները կազմակերպումէ թերթերի ընթերցում, կոլտնտեսականների զրույցներ, ռադիո, հետևում է կուսդիսցիպլինային(անդամավճարների մուծումը, ժողովներ հաճախելը, առաջադրություններ կատարելը և այլն)։

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐ...
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ — ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0187062

424

ԳԻՆՆ Է 15 Կ.

# УСТАВ

## КОМЯЧЕЙКИ КОЛХОЗНИКОВ

(Постановление ЦК ВКП (б) от 26 августа 1930 г.)

Издательство Ленгоркома К. П. (б) Армении

Տեղարդի տպարան Լենինականում, Պ, № 644 տիր. 1000